## ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՏՈՒՑՄԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/82

ք. Երևան

« 04 » «նոյեմբերի» 2021թ.

Երևանի քաղաքապետարանը, ի դեմս աշխատակազմի գնումների վարչության պետ Է. Կիրակոսյանի, որը գործում է Երևանի քաղաքապետի 14.11.2018 թվականի թիվ 3407-Ա որոշման հիման վրա, մի կողմից, մի կողմից, և «ԴՐԻՄ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ-ն ի դեմս Ընկերության տնօրեն Ա. Կոճցյանի, որը գործում է Ընկերության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. Պայմանագրի առարկան

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է **Երևան քաղաքի Արաբկիր վարչական շրջանի խաղադաշտերի ընթացիկ նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայությունների** մատուցման պարտավորությունը (այսուհետ՝ ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի (այսուհետ՝ պայմանագիր) անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

### 2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցինչհամապատասխանող ծառայություն.

ա) Չընդունել ծառայությունը՝ իրիայեցողությամբսահմանելովանպատշաճորակի ծառայությունը պայմանագրին համապատասխանող ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու պայմանագրի 5.2 կետովնախատեսվածտուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելուպայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված ծառայությունը չի համապատասխանում պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է ծառայության մատուցման ժամկետը:

**2.2 Պատվիրատուն պարտավոր է՝**

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված ծառայության արդյունքը, իսկ ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.3 Կատարողն իրավունք ունի՝**

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

**2.4 Կատարողը պարտավոր է՝**

2.4.1 Պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Որակավորման և պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

2.4.4 Կապալի օբյեկտի և դրա առանձին մասերի երաշխիքային ժամկետներին ներկայացվող պահանջները ներկայացված են նախագծանախահաշվային փաստաթղթերում:

2.4.5 Եթե սույն պայմանագրի 2.4.4 կետով սահմանված ժամկետի ընթացքում ի հայտ են գալիս թերություններ, ապա Կատարողը սույն պայմանագրով նախատեսված իր պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար Պատվիրատուին վճարում է տուգանք՝ հայտնաբերված թերության վերացման համար կապալառուի կամ Պատվիրատուի կողմից իրականացված փաստացի ծախսերի չափով:

## 3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Մատուցված ծառայությունն ընդունվում է Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է Պատվիրատուի և Կատարողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև պայմանագրով ծառայության մատուցման համար նախատեսված օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է տրամադրում իր կողմից ստորագրված՝ ծառայությունը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (հավելված N 3.1), իսկ էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով (գործողության իրականացման ձեռնարկը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Էլեկտրոնային գնումներ» բաժնում)՝ նաև հանձնման-ընդունման արձանագրությունը (հավելված N 3): Ընդ որում Կատարողը հանձնման-ընդունման արձանագրությունը չի կնքում, հաստատում է էլեկտրոնային ստորագրությամբ՝ լրացնելով միայն այն սյունակները, որոնք վերաբերում են իր տվյալներին (լրացման կարգը տեղադրված է www.procurement.am հասցեով գործող կայքի «Օրենսդրություն» բաժնի «Ֆինանսների նախարարի հրամաններ» ենթաբաժնում):

3.2 Եթե մատուցված ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին, Պատվիրատուն պայմանագրի 3.1 կետում նշված փաստաթղթերը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 20 աշխատանքային օրվա ընթացքում ստորագրում և էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա ստորագրման համար հիմք հանդիսացած դրական եզրակացությունը:

3.3 Եթե մատուցված ծառայությունը կամ դրա մի մասը չի համապատասխանում պայմանագրի պայմաններին, ապա Պատվիրատուն չի ստորագրում հանձնման-ընդունման արձանագրությունը և պայմանագրի 3.2 կետում նշված ժամկետում էլեկտրոնային գնումների armeps համակարգի միջոցով Կատարողին հետ է վերադարձնում հանձնման-ընդունման արձանագրությունը և դրա չստորագրման համար հիմք հանդիսացած բացասական եզրակացությունը: Սույն կետի կիրառման դեպքում Պատվիրատուն ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները և Կատարողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.4 Եթե պայմանագրի 3.2 կետով սահմանված ժամկետում Պատվիրատուն չի ընդունում մատուցված ծառայությունը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատուցված ծառայությունը համարվում է ընդունված և պայմանագրի 3.2 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն էլեկտրոնային գնումների համակարգի միջոցով Կատարողին է տրամադրում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրությունը:

## 4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1. Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա ծառայության գինը կազմում է **175000 ( մեկ հարյուր յոթանասունհինգ հազար) ՀՀ դրամ**:

Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցված ծառայության դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2) նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 25-ը:

## 5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում ծառայության մատուցման՝ պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 3 (երեք) տոկոսի չափով:Ընդ որում տուգանքը հաշվարկվում է նաև ծառայությունը [illegible]

պայմանագրով սահմանված ժամկետում մատուցելու, սակայն պատվիրատուի կողմից այդ չընդունվելու դեպքում:

5.3 Պայմանագրով նախատեսված ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված ծառայության գնի 0.19 (զրո ամբողջ տասնինը հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված աշխատանքային օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

## 6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ(ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրության հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին

## 7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.3 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն միակողմանիորեն լուծում է պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որի մասով պայմանագիրը լուծվել է:

7.4 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

7.5 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող աշխատանքի ծավալների կամ ձեռք բերվող աշխատանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման յուրաքանչյուր դեպք սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Կատարողի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ Պատվիրատուի մոտ չի վերացել ծառայության օգտագործման պահանջը, իսկ Կատարողի առաջարկությունը ներկայացվել է ոչ ուշ, քան պայմանագրով իսկ գրանցծառայությունների մատուցման համար սահմանված ժամկետը լրանալուց առնվազն 5 օրացուցային օր առաջ: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ծառայության մատուցման ժամկետը

կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

7.7 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա:Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքովկամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ծառայության մատուցման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

7.9 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:Պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը տեղեկագրում հրապարակվելու օրը Պատվիրատուն այն ուղարկվում է նաև Կատարողի էլեկտրոնային փոստին:

7.10 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.11 Սույն պայմանագիրը կազմված է 10 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2 N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

**7.13 Սույն պայմանագրով նախատեսված Պատվիրատուի իրավունքներն ու պարտականությունները ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով իրականացնում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ֆինանսական վարչությունը:**

## 8.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**

Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան

**ԿԱՏԱՐՈՂ**

«Դրիմ Փրոջեկտ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Աերացիա 2/3շ. 32բն.
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1150008939059089
ՀՎՀՀ 02288148

Տնօրեն՝ Ս. [illegible]

Հավելված N 1
«04» նոյեմբերի 2021 թ. կնքված
ԵՔ-ԳՀԾՁԲ-21/82 ծածկագրով պայմանագրի

# ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ - ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| հրավերով նախատեսված չ/հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | տեխնիկական բնութագիրը | չափման միավորը | ընդհանուր գինը/ՀՀ դրամ | ընդհանուր քանակը | մատուցման հասցեն | մատուցման ժամկետը** |
|---|---|---|---|---|---|---|---|
| 1 | 71351540/416 | **Ծառայության մատուցման ընդհանուր պահանջների**<br>1. Տեխնիկական հսկողությունը պետք է իրականացվի պատվիրատուի կողմից տրամադրվող նախագծանախահաշվային փաստաթղթերի հիման վրա և պետք է ապահովի վերանորոգման աշխատանքների իրականացումը անհրաժեշտ որակով և ժամկետներում, տեխնիկական առանձնահատկություններին և այլ պայմանագրային փաստաթղթերին համապատասխան:<br>2. Տեխնիկական հսկողության ծառայությունները պետք է իրականացվեն ՀՀ Քաղաքաշինության նախարարի 28.04.1999թ.-ի N44 հրամանով հաստատված շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման հրահանգով և Պատվիրատուի կողմից տրամադրվող պարտականությունների շրջանակներում:<br>3. Տեխնիկական հսկողության իրականացողի հիմնական պարտականություններն են՝<br>• շինարարության սկզբից մինչև ավարտը ընկած ժամանակահատվածում պարբերաբար բուսանկարահանել շինարարության օբյեկտի վիճակը,<br>• ապահովել կատարվող աշխատանքների համապատասխանությունը կնքված պայմանագրի պայմաններին, շինարարական նորմերին և կանոններին,<br>• Պատվիրատուի կողմից պատվիրակողի պարտավորությունների կատարման ընթացքում հայտնաբերված անհամապատասխանություններ | դրամ | 175000 | 1 | Արաբկիր Վ/2 | Պայմանագիրը ուժի մեջ է մտնում շինարարական աշխատանքների գնման պայմանագիրը վավերացնելու օրվանից և գործում է շինարարական աշխատանքներին զուգընթաց: |

| | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| | | Պատվիրատուին՝ կցելով համապատասխան հիմնավորումը,<br>• ստուգել և հաստատել աշխատանքային և կատարողական փաստաթղթերը՝ նախապատրաստված Կապալառուի կողմից,<br>• ստուգել և վերահսկել նյութերի որակը և շինարարական աշխատանքների ընթացքը, որպեսզի ապահովի ծանուցումներին և պայմանագրային մյուս փաստաթղթերին համապատասխանությունը: Արգելել կամ փոփոխել այն նյութերը, որոնք չեն համապատասխանում անհրաժեշտ պայմաններին,<br>• վերահսկել և գնահատել շինաշխատանքների առաջընթացը, որպեսզի ապահովվի շինաշխատանքների ավարտը՝ համաձայն պայմանագրի մեջ նշված ժամանակացույցի.<br>• ստուգել բոլոր այն փորձարկումների արդյունքները, որոնք անհրաժեշտ են որակի ապահովման համար: Ստուգել բոլոր փաստաթղթերը (այդ թվում՝ բոլոր ծախսային չափերը և հաշվարկները), որոնք անհրաժեշտ են համապատասխան վճարումները իրականացնելու համար,<br>• կատարել որակի և քանակի անհրաժեշտ հսկում (համապատասխան նշում կատարելով մատյանում), այն աշխատանքների անհրաժեշտ փորձարկումները, որոնք կատարվում են կապալի պայմանագրի իրականացման ընթացքում,<br>• շինարարության ժամանակ առաջացող խնդիրների դեպքում առաջարկել այն գործողությունները, որոնք անհրաժեշտ կլինեն աշխատանքային ժամանակացույցը պահպանելու համար,<br>• հսկել բոլոր այն հարցերը, որոնք կապված են շինաշխատանքների անխափան իրականացման հետ և դրանից Կապալառուին տալով նշումներ, բնապահպանության անվտանգության սարքերի և այլ համապատասխան միջոցառումների իրականացման համար,<br>• կատարել անհրաժեշտ օրական գրառումներ, որոնք անհրաժեշտ են պայմանագրի ընթացքի վերահսկման համար (ներառելով կատարված աշխատանքների հաշվետվությունը և այլ անհրաժեշտ փաստաթղթեր),<br>• կատարել աշխատանքների ծավալների չափագրումներ և ծանոթացնել կատարողական փաստաթղթերի կազմմանը և հաստատմանը,<br>• շինարարության ավարտից հետո 5 աշխատանքային օրվա ընթացքում Պատվիրատուին ներկայացնել Հաշվետվություն կատարված աշխատանքների վերաբերյալ՝ կցելով լուսանկարներ, անհրաժեշտ գծագրեր, ծածկված աշխատանքների ակտեր, փորձարկման ակտեր, սերտիֆիկատներ,<br>• Պատվիրատուի ցուցումով կատարել կատարման ենթակա աշխատանքները:<br>• պարտավոր է ներկա լինել քաղաքաշինության նախարարի թիվ 44 առ 28.04.1998թ. «Շինարարության որակի տեխնիկական հսկողության իրականացման կարգում» հրամանի հավելված 1-ով նախատեսված ծածկված շինմոնտաժային աշխատանքների | | | | | |

| | | | |
|---|---|---|---|
| | | իրականացման ընթացքում:<br>**Հաշվետվության ներկայացման պահանջներ**<br>Կատարողը պարտավոր է ներկայացնել Պատվիրատուին ծառայությունների մատուցման ընթացքի և ավարտական հաշվետվություններ, որոնք հանդիսանում են ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հիմնավորող փաստաթղթեր:<br>Ընթացիկ հաշվետվությունները ներկայացվում են պարբերաբար, ընդգրկելով իրականացված ծառայությունները և կատարված աշխատանքները հաշվառող ու հիմնավորող սահմանված փաստաթղթերի պատճենները (համառոտ նկարագրությամբ տվյալ ժամանակահատվածում իրականացված շինարարական աշխատանքների և տեխ. հսկողության ծառայությունների վերաբերյալ, լաբորատոր փորձարկումների արդյունքներ, երկրաչափական կոնստրուկցիաների դրական համապատասխանության հավաստագրեր, ծածկված (միջանկյալ) աշխատանքների ընդունման ակտեր, նախագծի շինարարության մատյանը, ինչպես նաև ծածկված (միջանկյալ) աշխատանքների քանակները:<br>Ավարտական հաշվետվությունը պետք է ընդգրկի հետևյալ փաստաթղթերի պատճենները՝ ավարտական կատարողական փաստաթղթեր, ամփոփ նկարագրական տեղեկանք իրականացված շինարարական աշխատանքների ամբողջ ժամանակահատվածի համար, նախագծի շինարարության մատյանը, ինչպես նաև ավարտված շինարարական օբյեկտի քանակագրերը:<br>Ընթացիկ հաշվետվությունները նաև ներկայացվում են շինարարական աշխատանքների յուրաքանչյուր կատարողական արձանագրությունը Պատվիրատուի ստացողի կողմից ստորագրվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում՝ Ծառայությունների հանձնման-ընդունման արձանագրությունների հետ մեկտեղ:<br>Ավարտական հաշվետվությունը ներկայացվում է շինարարական աշխատանքների ավարտական կատարողական արձանագրությունը Պատվիրատուի ստացողի կողմից ստորագրվելուց հետո հինգ աշխատանքային օրվա ընթացքում: | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900008331874

Է. Կիրակոսյան

**ԿԱՏԱՐՈՂ**
«Դրիմ Փրոջեկտ» ՍՊԸ
«Դրիմ Փրոջեկտ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Աէրացիա 2/3շ, 32բն.
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 11500080390590089
ՀՎՀՀ 02288148

Տնօրեն՝ Ա. Ավետյան

Հավելված 2
«04» նոյեմբերի 2021 թ. կնքված
ԵՔ-ԳՀԽԾՁԲ-21/82 ծածկագրով պայմանագրի

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀդրամ

| Ծառայության | | | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| հրավերով նախատեսված չափաբաժնի համարը | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | անվանումը | որից վճարումները նախատեսվում է իրականացնել 2021 թ-ին՝ ըստ ամիսների, այդ թվում** | | | | | | |
| | | | օգոստոս | սեպտեմբեր | հոկտեմբեր | նոյեմբեր | դեկտեմբեր | Ընդամենը | |
| 1 | 71351540 | Երևան քաղաքի Աջափնյակ վարչական շրջանի խաղահրապարակների ընթացիկ նորոգման աշխատանքների որակի տեխնիկական հսկողության խորհրդատվական ծառայություններ | --- | --- | | 175000 | 175000 | 175000 | |

**ՊԱՏՎԻՐԱՏՈՒ**
Երևանի քաղաքապետարան
ք. Երևան, Արգիշտի փող. 1
Կենտրոնական գանձապետարան
ՀՀ 900032313174
ՀՎՀՀ 02593108

Է. Կիրակոսյան
(ստորագրություն)
Կ.Տ.

**ԿԱՏԱՐՈՂ**
«Դրիմ Փրոջեկտ» ՍՊԸ
«Դրիմ Փրոջեկտ» ՍՊԸ
ՀՀ, ք.Երևան, Աէրացիա 2/32, 32բն.
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ՀՀ 1150008939059089
ՀՎՀՀ 02288148

Տնօրեն՝ Ա. Կոնյան
(ստորագրություն)
Կ.Տ.

Հավելված 3
ԵՔ-ԳՀԾՁԲ-21/82 « » 2021 թ. կնքված
ծածկագրով պայմանագրի

Պայմանագրիկողմ
_______________
_______________
գտնվելուվայրը _______________
հհ _______________
հվհհ _______________

Պատվիրատու
_______________
_______________
գտնվելուվայրը _______________
հհ _______________
հվհհ _______________

# ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
# ՊԱՅՄԱՆԱԳՐԻԿԱՄԴՐԱՄԻՄԱՍԻ ԿԱՏԱՐՄԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԻ ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ

« » « »20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝ _______________

Պայմանագրիկնքմանամսաթիվը՝ «____» «_______________» 20 թ.
Պայմանագրիհամարը՝ _______
ՊատվիրատունևՊայմանագրիկողմը՝հիմք ընդունելովպայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. դուրս գրված N ___ հաշիվ ապրանքագիրը, կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
ՊայմանագրիշրջանակներումՊայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

| N | անվանումը | տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը | Մատուցվածծառայություններիքանակական ցուցանիշը | | կատարման ժամկետը | | Վճարման ենթակա գումարը /հազար դրամ/ | Վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/ |
|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի | փաստացի | | |
| | | | | | | | | |
| | | | | | | | | |

Սույն արձանագրությաներկկողմհաստատման համար հիմք հանդիսացածհաշիվապրանքագիրըևդրական եզրակացությունը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց
_______________
ստորագրություն
_______________
ազգանուն, անուն
Կ.Տ.

*Հավելված 3.1*
*« » 2021 թ. կնքված*
*ԵՔ-ԳՀԾՁԲ-21/82 ծածկագրով պայմանագրի*

ԱԿՏ
պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____________-ի (այսուհետ՝ Պատվիրատու) և _____________-ի
Պատվիրատուի անվանումը

(այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. ____________________-ին կնքված N ____________________
պայմանագրի կնքման ամսաթիվը պայմանագրի համարը

գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. ___________-ին հանձնման-ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

| Ծառայության | | |
|---|---|---|
| անվանումը | չափման միավորը | քանակը (փաստացի) |
| | | |
| | | |

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

КՈՂՄԵՐԸ

**Հանձնեց**
հայտը նախագծած ներկայացուցիչ՝

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն

**Ընդունեց**

____________________
ազգանուն, անուն

____________________
ստորագրություն

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԻ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ N 002409 [234409684 ]
PAYMENT ORDER RECEIPT
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Մասիս» մ/ճ
"ARMBUSINESSBANK" CJSC "Masis" branch

ԴԿ\ID 1396
Ամսաթիվ\Date 01/11/21 12:39

| Դեբետ\Debit | Կրեդիտ\Credit | Գումար\Amount |
|---|---|---|
| 1150008939059089 | 900008000664 | AMD 17,500.00 |

Վճարող\Remitter
«ԴՐԻՄ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ
"DREAM PROJEKT" LLC

Վճարողի բանկ\Remitter's Bank
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ARMBUSINESSBANK CJSK

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9902288148

Շահառու\Beneficiary
Հայտի և պայմանագրի ապահովումը բանկային երաշխիքով կամ կանխիկ փողի ձևով

Շահառուի բանկ\Beneficiary's Bank
Գանձապետական բաժանմունք
Treasure division

Գումարը բառերով\Amount in Words
*Տասնյոթ հազար հինգ հարյուր դրամ*

Նպատակ\Details
ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՊԱՀՈՎՈՒՄ 10% ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ԳՆՄԱՆ
ՊԱՅՄ ԵՔ-ԳՀԱԾՁԲ-21/82

Կատարող\Maker Արմենուհի Գալստյան

Կ.Տ.
ՏԳ.

ՎՃԱՐՄԱՆ ՀԱՆՁՆԱՐԱՐԱԳՐԻ ԱՆԴՈՐՐԱԳԻՐ N 001920 [1272495421]

PAYMENT ORDER RECEIPT

«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ «Մասիս» մ/ճ

"ARMBUSINESSBANK" CJSC "Masis" branch

Դեբետ\Debit 1150008939059089

Կրեդիտ\Credit 900008000698

Ամսաթիվ\Date 03/11/21 15:20

ԴԿ\ID 764

Գումար\Amount AMD 26,250.00

Վճարող\Remitter
«ԴՐԻՄ ՓՐՈՋԵԿՏ» ՍՊԸ
"DREAM PROJEKT" LLC

Վճարողի բանկ\Remitter's Bank
«ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ» ՓԲԸ
ARMBUSINESSBANK CJSK

Վճարողի ՀՎՀՀ\Remitter's Tax Code 9902288148

Ստացող\Beneficiary
Գնումների ոլորտի կարգավորման ապահովում՝ կանխիկ փողի ձևով, ՀՀֆինանսների նախարարություն

Ստացողի բանկ\Beneficiary's Bank
Գանձապետական բաժանմունք
Treasure division

Գումարը բառերով\Amount in Words
Քսանվեց հազար երկու հարյուր հիսուն դրամ

Նպատակ\Details
ՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԱՊԱՀՈՎՈՒՄ 15Է ՊԱՏՎԻՐԱՏՈՒ ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆ ԳՆՈՒՄ
ՊԱՅՄ ԵՔ-ԳՀԾՁԲ-21/82

Կատարող\Maker Սոնա Հարությունյան

ՀԱՅԲԻԶՆԵՍԲԱՆԿ ՓԲԸ
ARMBUSINESSBANK CJSC
MASIS BRANCH

Կ.Տ.
ST.